ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/9-1

ք.Երևան «12» « 12 » 2019թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, (գործելով Հայաստանի Հանրապետության անունից), ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արման Երիջանյանի, (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 07.05.2019թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/9-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.9 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով, որ ՀՀ ԱՆ «Արմավիր» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկները 2019թ, հոկտեմբերի 15-ից անցել են սննդի հատկացման նոր համակարգի՝ պատրաստի սննդի ձեռքբերման ծառայության, ուստի անհրաժեշտություն է առաջացել նվազեցնել մատակարարվող սննդամթերքի քանակները: Հաշվի առնելով նշվածը, Գնորդի նախաձեռնությամբ կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված՝ սննդամթերքի քանակները նվազեցնել, մասնավորապես՝

1) 12000 կգ «ձկան պահածո» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 2419,2 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 2283724,8 (երկու միլիոն երկու հարյուր ութսուներեք հազար յոթ հարյուր քսանչորս ամբողջ ութ) ՀՀ դրամ,

2) 22000 կգ «շաքարավազ սպիտակ» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 6000 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 1758000 (մեկ միլիոն յոթ հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նվազեցվող քանակների չափով վերացել է «ձկան պահածո» և «շաքարավազ սպիտակ» ապրանքատեսակների գնման պահանջը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կատարել ֆինանսական հատկացումների նվազեցում և այդ գումարի չափով նվազեցնել Պայմանագրի գինը:

1.2 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պայմանագրի գինը՝ կազմում 13732275,2 (տասներեք միլիոն յոթ հարյուր երեսուներկու հազար երկու հարյուր յոթանասունհինգ ամբողջ երկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:

1.3 Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի, 1-ին և 3-րդ չափաբաժինների աղյուսակը հաստատել նոր խմբագրությամբ՝ առանց տեխնիկական բնութագրի սյունակի (որը մնում է ամփոփոխ):

1.4 Պայմանագրի N2 հավելվածը՝ «վճարման ժամանակացույց»-ը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N2-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/9-1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և N1, N2 հավելվածները կազմված են 4 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | Ցիկլոիդ ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | Հասցե՝ Ք.Երևան, Նորք Մարաշ թաղամաս, Նորքի 1 նրբ. 5 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ 900011175016 | 16048550841200 |
| ՀՎՀՀ 02204739 | 00444541 |
| ՔԿ ծառայություն՝ Ա.Ղազարյան | Տնօրեն՝ Ա. Երիցյանյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 1*
*« 12 » « 12 » 2019 թ. կնքված*
*N 1 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/9-1 ծածկագրով պայմանագրի*

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | արտադրողը և ծագման երկիրը | չափման միավորը | միավորի գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 1 | 15211110/2 | Ձկան պահածո | «Վինտար» ՍՊԸ, Ուկրաինա «Ֆորտունա» ՍՊԸ ՌԴ | կգ | 944 | 9044275,2 | 9580,8 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներ՝ համաձայն բաշխման ցուցակի | 1500 | 2-րդ եռամսյակ |
| | | | | | | | | | 4500 | 3-րդ եռամսյակ |
| | | | | | | | | | 3580,8 | 4-րդ եռամսյակ |
| 3 | 15831000/2 | Շաքարավազ սպիտակ | «Պրաղ ՊԿ Պոդելյա» Ուկրաինա «Ալեքս Հոլդինգ» ՍՊԸ ՀՀ | կգ | 293 | 4688000 | 16000 | | 8000 | 3-րդ եռամսյակ |
| | | | | | | | | | 8000 | 4-րդ եռամսյակ |

*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ԳՆՈՐԴ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայություն՝ Ա.Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
Ցիկլոիդ ՍՊԸ
Հասցե՝ Ք.Երևան, Նորք Մարաշ թաղամաս,
Նորքի 1 նրբ. 5
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ
16048550841200
00444541
Տնօրեն՝ Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված N 2*
*« 12 » « 12 » 2019 թ. կնքված*
*N 1 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/9-1 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին` ըստ եռամսյակների, այդ թվում | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
| 1 | 15211110/2 | Ձկան պահածո | - | 1416000 | 5664000 | 9044275,2 | 9044275,2 |
| 3 | 15831000/2 | Շաքարավազ սպիտակ | - | - | 2344000 | 4688000 | 4688000 |
| | | | | | | | 13732275,2 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայություն`                 Ա.Ղազարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
Ցիկլոիդ ՍՊԸ
Հասցե` Ք.Երևան, Նորք Մարաշ թաղամաս,
Նորքի 1 նրբ. 5
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ
16048550841200
00444541
Տնօրեն`                 Ա. Երիցյան
/ստորագրություն/